Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/1>> ծածկագրով ՀՀ Արարատի և ՀՀ Սյունիքի մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 ապրիլի 2018թ.
Ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մանուկյան
Հ. Հարությունյան
Կ. Երիցյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր
Հանձնաժողովի անդամ՝ Հ. Դավթյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ն. Մարտիրոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) Գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էին հետևյալ անհամապատասխանությունները.

- Համաձայն հրավերի I-ին մասի 2-րդ կետի 2.5 ենթակետի 4-րդ պարբերության՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հրավերի Հավելված 5.2-ի աղյուսակով պետք է ներկայացնի հիմնական աշխատակազմում ներառված առնվազն 3 բարձրագույն կրթությամբ

ճարտարապետների, ովքեր ունեն առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման ոլորտում մարզերի տարածքային հատակագծման նախագծերի, համայնքների գլխավոր հատակագծերի կամ գոտևորման նախագծերի մշակման աշխատանքներում, սակայն **<<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի** և **<<Զանգված>> ՍՊԸ-ի** ներկայացրած Հավելված 5.2-ի աղյուսակից հստակ չի երևում պահանջվող տեղեկատվությունը (անհրաժեշտ է նշել մասնագետների կատարած աշխատանքը և գործունեության ոլորտը, վերը թվարկված աշխատանքներով զբաղվելու ժամանակահատվածը (սկիզբ-ավարտ)):

Բացի այդ՝

- Բացակայում են **<<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի** ներկայացրած 22.03.2016թ. կնքված <<ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/2>> ծածկագրով պայմանագրի հավելված 3.1-ը, հավելվածներ 3-ի և 3.1-ի օրինակելի ձևերը, ինչպես նաև 24.05.2017թ. կնքված <<ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1>> ծածկագրով պայմանագրի հավելված 3.1-ը և 3.1-ի օրինակելի ձևը:

- **<<Զանգված>> ՍՊԸ-ի** կողմից առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնություններում նշված է, որ վերջիններս համաձայն են մասնակցել <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/1>> ծածկագրով կնքվելիք պայմանագրի շրջանակներում մատուցվելիք աշխատանքներին, մինչդեռ նման ծածկագրով պայմանագիր այս գործընթացի շրջանակներում չի լինելու:

- **<<Հայնախագիծ>> ՓԲԸ-ի** ներկայացրած Հավելված 5.2-ի աղյուսակում անհրաժեշտ է նշել յուրաքանչյուր մասնագետի տվյալ աշխատանքով զբաղվելու ժամանակահատվածը (սկիզբ-ավարտ): Սերգեյ Ամիրաղյանը դիպլոմը ստացել է 1975 թվականին, սակայն Հավելված 5.2-ում նշված է 53 տարվա ճարտարապետի աշխատանքային փորձ:

- **<<Ատրիում պրո ստուդիո>> ՍՊԸ-ի** ներկայացրած Հավելված 5.2-ի աղյուսակից պարզվում է, որ Հաբեթ Յուզբաշյան և Սերոբ Գյուլխանջյան աշխատակիցները չունեն առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ մարզերի տարածքային հատակագծման նախագծերի, համայնքների գլխավոր հատակագծերի կամ գոտևորման նախագծերի մշակման աշխատանքներում: Բացակայում են նաև ներկայացված 08.10.2015թ. կնքված <<ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-15/02>> ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագիրը, հավելվածներ 3-ի և 3.1-ի օրինակելի ձևերը, ինչպես նաև հաշիվ-ապրանքագիրը հաստատված չէ ծառայությունը ստացողի կողմից: Ներկայացված 23.02.2015թ. կնքված <<ԳՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-15/01>> ծածկագրով պայմանագրում բացակայում է հավելվա 3-ի օրինակելի ձևը, լրացուցիչ համաձայնագիր N1-ը երկկողմանի հաստատված չէ, իսկ 23.06.2015թ. կնքված <<ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-01/01>> ծածկագրով պայմանագրում բացակայում են հավելվածներ 3-ի և 3.1-ի օրինակելի ձևերը, ինպես նաև 550 000 ՀՀ դրամի հաշիվ ապրանքագրի պատճենը:

գ) Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Համաձայն Կարգի 48-րդ կետի՝ սահմանված ժամկետում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը կհայտարարվի ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար, կմերժվի և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

դ) Յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ն. Մարտիրոսյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել

Չափաբաժին 1 <<Երևաննախագիծ>> ՓԲԸ –ին,

Չափաբաժին 2 <<Ատրիում պրո ստուդիո>> ՍՊԸ -ին,

Չափաբաժիններ 3, 4, 5, 6, 8, 11 <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին,

Չափաբաժիններ 7, 9, 10 <<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ն. Մարտիրոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն. Մարտիրոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ն. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------- Ն. Մանուկյան

---------- Հ. Հարությունյան

---------- Կ. Երիցյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան